ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի ամփոփ հաշվետվությունը՝ պաշտոնավարման 100-օրյա ժամկետի լրանալու կապակցությամբ

- 2019 թ.-ից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող բոլոր միջոցների տրամադրումն իրականացվել է հավաստագրերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել է 2891 աջակցող սարք:

- Ընդունվել է «Բռնադատվածների վարկային պարտավորությունները որպես պետական աջակցություն ձևակերպելու մասին» կառավարության որոշումը, ըստ որի 303 բռնադատված անձանց և նրանց առաջին հերթի ժառանգներին կներվի արտոնյալ պայմաններով տրամադրված՝ շուրջ 1 մլրդ 300 մլն դրամի վարկերը:

- Սահմանվել է «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը», ըստ որի ընտանեկան բռնության զոհերին պետության կողմից կտրամադրվի նաև ֆինանսական աջակցություն՝ մինչև 150,000 դրամի սահմաններում:

- Փոփոխություններ են կատարվել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին օրենքում», որի արդյունքում թրաֆիքինգի զոհ երեխաներին պետության կողմից կտրամադրվի միանվագ ֆինանսական աջակցություն՝ 250,000 դրամի սահմաններում:

- Փոփոխություններ են կատարվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, ինչի արդյունքում 21,000 շահառուների համար բարձրացվել է նվազագույն կենսաթոշակի չափը՝ դառնալով 25,500 դրամ:

- Բարձրացվել են ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը, ինչի արդյունքում՝ 63,000 շահառուների 2019 թ.-ի հունվարի մեկից վճարվում է 25,500 դրամ նպաստ:

- Փոփոխություններ են կատարվել «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու» վերաբերյալ որոշման մեջ: Այդ փոփոխությունների արդյունքում կլուծվի 10 անօթևան անձանց ժամանակավոր կացարան տրամադրելու խնդիրը «Վետերան» օթևանում:

- Հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելելու նպատակով նախապատրաստվել և ստորագրվել է հուշագիր աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, առողջապահության նախարարության և «Բարի մամա» հասարակական կազմակերպության միջև:

- Հաստատվել են ընտանեկան բռնության կանխարգելման օրենքի կիրարկումն ապահովող մեխանիզմները, այդ թվում՝ մշակվել են ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները և չափորոշիչները:

- 2019 թ.-ին սոցիալական պաշտպանության ոլորտում երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և աջակցության ծրագրերի իրականացումը, ինչպես նաև՝ ծառայությունների մատուցումը ՀԿ-ներին և հիմնադրամներին պատվիրակվել է բացառապես բաց մրցույթների արդյունքում:

- Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և աջակցության ծրագրերի շրջանակներում հայտարարվել են մրցույթներ՝ ՀԿ-ների և հիմնադրամների համար, որոնց շրջանակներում ապահովվել են հետևյալ ծառայությունները՝

  - Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայության համար (Լոռու մարզ, 55 շահառու)

  - Անօթևան անձանց ժամանակավոր կացարանով ապահովման համար (Երևան, 100 շահառու)

  - Մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների խնամքի ծառայությունների համար (Երևան, 15 շահառու)

  - Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայության համար (Սպիտակ, 16 շահառու)

  - ՀՀ մարզերում միայնակ տարեցների տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի ծառայությունների մատուցման համար (Երևան և ՀՀ 6 մարզեր, 3440 շահառու)

- Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և աջակցության ծրագրերի շրջանակներում հայտարարված մրցույթները հաղթել են հետևյալ ՀԿ-ները՝

  - «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն (60 շահառու)

  - «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ՀԿ (50 շահառու)

  - «Իմ ուղին» ուսումնավերականգնողական ցերեկային կենտրոն (80 շահառու):

- Այսուհետ զինծառայության ստաժում կհաշվառվի նաև Արցախի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, փրկարար ծառայության համակարգերում զինվորական ծառայության ժամանակահատվածը:

- Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում համաձայնագիր կնքած պետությունից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա կենսաթոշակ նշանակելիս՝ նախկին օրենսդրությամբ հաշվարկված ստաժը կպահպանվի նույնությամբ:

- Սահմանվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների ընդունման մրցութային կարգ:

- Սահմանվել է նախարարության ենթակայության ներքո գտնվող հաստատություններում թափուր պաշտոնները համալրելու համար մրցույթի անցկացման պարտադիր պայման:

- Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի նախագահ՝ 2020-2021 թթ. կայանալիք 64-րդ և 65-րդ նստաշրջանների համար:

- Մեկնարկել են աշխատանքները Գենդերային ռազմավարության և գենդերային զգայուն բյուջետավորման գործիքակազմի մշակման ուղղությամբ:

- Վարչապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ նպաստների համակարգի վերանայման նպատակով:

- Մշակվել է կառավարության որոշման նախագիծ, ըստ որի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ներառված, սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներ կատարող անձանց վարձատրությանն ուղղված միջոցները չեն դիտարկվի որպես եկամուտ և չեն ազդի ընտանիքի անապահովության միավորի և նպաստի վրա:

- Վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհուրդ:

- Վարչապետի հանձնարարականով հավաքագրվել և Կառավարություն է ներկայացվել Հայաստանում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ տվյալների ամփոփ բազա: Ըստ այդմ՝ մասնավոր հատվածում աշխատող, 5 և ավելի աշխատակիցներ ունեցող շուրջ 5700 ուսումնասիրված ընկերություններում կա 2525 թափուր աշխատատեղ: Պետական սեկտորում թափուր աշխատատեղերի թիվը 2989 է:

- Պատրաստվել են առաջարկություններ՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառույթների ավելացման վերաբերյալ, որոնցով կապահովվի աշխատանքային իրավունքների խախտման դեպքում տեսչական մարմնի իրավասությունները:

- Ստորագրման է նախապատրաստվել Հայաստանի Հանրապետության 2019-2023 թթ.-ի «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը:

- Աշխատանքի միջազգային կազմակերպության կենտրոնական է ներկայացվել «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի» կիրարկման վերաբերյալ ազգային զեկույցը:

- Ստորագրվել են «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրի իրականացման ընթացակարգերը:

- Աշխատանքի միջազգային կազմակերպության կենտրոնական է ներկայացվել Հայաստանի կողմից չվավերացված կոնվենցիաների և առաջարկների վերաբերյալ զեկույցը:

- Հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից Հասարակական խորհրդի կազմը և աշխատանքային ծրագիրը: